գուա Եկեղեցւոյ և միանգամայն նպաստել և մասնակցիլ ազգային մանկաւոյն բաղմաբաղձ կրթութեան և դաստիարակութեան մշանջենաւոր բարերարութեամբ։ Ուստի քաղցր պարտիք կզգամք հրապարակաւ խորին շնորհակալեաց և յարգանաց հաւաստիքը նուիրել Նորին Մեծապատուութեան։

ԲԱՐՁՐ ԱՐՔԱՅԱԶՈՒՆ ԷՇՐԷՖ—ՎԱԼԷԱ ԽԱՆ։

Երբայազուն մեծ դուքս բարձրապատիւ Էշրէֆ-Վալէա Խան՝ եղբայր Օգոստ. թագաւորին Պարսից՝ որ կը վերադառնայր ի Պօլսոյ երթալ ի Հայրենիսն, անցեալ ամսոյ ի 28-ն յաւուր Կիւրակէի Երևանէն յատկապէս եկաւ յայցելութիւն Սրբազնագոյն Հայրապետիս՝ ուղեկցութեամբ վսեմ. Կարմալին նահանգապետին Երևանայ և այլոց, և արժանաւոր և սիրալիր մեծարանօք և պատուով ընդունվեցաւ ի կողմանէ Վ. Հ. Կաթողիկոսի։

Նորին Բարձրապ. Մեծութիւնը հաճեց այցելել և տեսնել Մայր Էթոռոյս հնութիւնքը, Մատենադարանը, Ուսումնարանը և Տպարանը, և ապա ճաշեց ի սեղան Վեհափառի ընդ բարձրաստիճան ուղեկիցս իւր, և խորին և սրտագին շնորհակալութեամբք և համակրութեամբք ընդ երեկս վերադարձաւ Երևան, որ հետևեալ օր պիտի ուղևորէր ի Թէհրան։

Ի Պօլսոյ ցԹէհրան ուղեկից էր Նորին Մեծութեան Կ. Պոլսոյ Պարսից Դեսպանատան առաջին խորհրդական և Թարգման Պ. Միրզա Բիզա Խանն։

ՍՈՎ Ի ՍՊԱՀԱՆ

Գթութիւն և օգնութիւն կը հայցեն և կաղաղակեն մեր Սպահանաբնակ սիրելի և դժբաղդ ազգայինք յերեսաց մահաստիւռ սովոյն։

Ո՞ր ազգային, ո՞ր առաքինասէր և բարեպաշտ սիրտ կը հանդուրժէ ոչ՝ լսել և անտարբեր մնալ եղբարց ողորմելի և թշուառ վիճակին, եղբարց՝ որք յետ տոգորելոյ հնտախտիւք և կորուսանելոյ ոմանց զսիրելիսն՝ այժմ աւուր պարենի կարօտ մնացած՝ կը հեծեն դառնապէս, եղբարց՝ որոց բազմաց ընտանիք՝ որդիք և զաւակունք և թօթովախօս մանկունք հեկեկանօք և թախանձանօք գէթ ջուր հաց կը խնդրեն ի ծնողաց, և ի փոխարէնն՝ աղի արտասուք և աչխարշ և սրտաճմլիկ մորմոքմունք և եթ կը պատասխանեն, եղբարց կ'ասեմք՝ որք՝ ոչ՝ սովամահ կորնչելոյ վրանդաց և տառապանաց մէջ ոգի ի բուն կը տագնապին և կը հալին, այժմ նոքա յոյս առ Աստուած ուղղած և ապաւինած՝ նոյնպէս հեռաւոր և մերձաւոր ազգակից եղբարց անհրաժեշտ և վաղընդփոյթ կարեկցութեանց և նիւթական ձեռնտուութեանց ակնդէտ և անհամբեր անձկանօք մեծապէս կը կարօտին։ Ուստի Հայրք՝ Հայրք փութացէք այն թշուառ ողորմելեաց անձնիւր ազգային ըստ կարեացն և ըստ ազգակցական և եղբայրսիրական պարտաւորութեանց ձեռն օգնութեան և փրկութեան կարկառել, և մխիթարելով զնոսա՝ միանգամայն կենաց աղատարարք փայլել։ Ինչպէս Ամենագրոյս Գ. թուոյն մէջ հրատարակած եմք, արդէն հոգևոր և ծայրագոյն իշխանութեան կողմանէ

Ռուսաստանի ամեն վիճակաց հրամանագրուած հրահանգաց համաձայն՝ և տեղական հոգև. Կառավարութեանց և Գեր. Առաջնորդաց ձեռամբք նշանակուած են նպաստահաւաքք, որոց տրուած նպաստք և ողորմութիւնք հետզհետէ պիտի խրրկուին ի ձեռն Սինոդի Ս. Էջմիածնի ի Սպահան կարօտելոց բաշխելոյ համար։

Այս առթիւ մեր խորին շնորհակալութիւնքը կը փութամք պարզել Հնդկաստանաբնակ և Դաւրիժաբնակ սիրելի ազգայնոց, և Մարդաս. Ընկերութեան Բաղուայ, որք ոչ սակաւ նպաստներով ձեռն օգնութեան և մխիթարութեան մատակարարած և շնորհած են Սպահանաբնակ Հայ եղբարց թշուառութեանց և վշտաց ի թեթևութիւն։

Նոյնպէս շնորհակալութիւն մեծ այն ամեն օտար ազգի մարդասէր բարերարաց՝ որք մարդկութեան վսեմ պարտաւորութիւններէն և զգացմունքներէն թելադրեալ՝ կարեկից եղած են նոյն ողորմելեաց նիւթական նպաստներով։

Իսկ գոհ եմք մեծապէս Սպահանայ ԵՐԿԵՂ ԵՂԲԱՏՑՑ ընկերութենէ և Հոգաբարձութենէ, և կը գովեմք նոցա անխոնջ՝ եռանդուն և եղբայրսիրական ջանքերը, որով աստի և անտի նուէրներ և նպաստներ ընդունելով՝ կը բաղձան թեթևացնել իւրեանց քաղաքակից եղբարց անբմբեր վշտաց և թշուառութեանց ծանրութիւնը՝ խնամելով և օգնելով բազմակարօտ տկարաց և աղքատաց։ Նաև պարտք կը համարիմք նոյն Հոգաբարձութեան Յայտարարութիւնը հրատարակել աստ ի տորև։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ,

ԱՌ ՊԱՏՈՒԵԼԻ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ, ԵՒ ԱՌ ՀԱՄԱՅՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՂԲԱՐՍ ՄԵՐ, ՈՐՔ ՅԱՄԵՆԱՅՆ ՏԵՂԻՍ։

Ի 1870 ամի, այն ինչ սկիզբն առեալ թանգութեան ի քաղաքին Սպահան, որ մինչ ցայսօր շարունակի անհնարին աղետիւ և անլուր սաստկութեամբ, որպէս պատիժ պատուհասի մեղաց մարդկան սովաբեկ արարեալ զմարդիկ, որք ստիպեցան անգամ մեռելոտի դիօք, արեամբ կենդանեաց և այլ ամենայն բուսովք երկրի լցուցանել զսովալլուկ քաղց որովայնի իւրեանց, այլ ի զո՜ւր. զի այն ինչ զանսովոր իրս և զգարշելիս ուտէին, անդէն և անդ ուռուցեալ դիաթաւալ մեռանէին, մանկունք ի գիրկս մարցն անշնչացեալ, և մարդիկ որպէս զտերևս ծառոց թօթափեալ ի փողոցս կենաղրաւ լինէին, զրեթէ քառասուն հազար հոգիք յայլազգեաց քաղաքիս և ի սահմանս նորա սովամահ սպառեցան ի կենաց։ Այլ գոհութիւն Տեառըն, զի ազգս Հայոց աստ ի Ջուղա՝ մարդասիրութիւնս ոչ սակաւ ընկալեալ հետզհետէ յողորմածաց, որով հոգի առեալ եկաց ի կեանս կենդանութեան ցարդ։ Եհա՝ զի եթէ Առաքեալն Աստուծոյ քարոզէ ասելով, ''Ողորմութիւն բարձրը ի գլուխ պարծի առ դատաստանաւ ,,։ Իսկ զնարդ այժմ առ մեօք, ոչ միայն ասեմք լեալ է մեզ պարծանք բարօրութեան, այլ որպէս հրաշք իմն աստուածախնամ տեսչութեան՝ որով քաղցրացեալ են սիրտք Ազգասիրաց ի դէպ ժամանակիս սովու, կարեկից լինելով տա-

ռատկերութեան Ազգիս, բարեպաշտական հոգւով շնորհեալ են զտուրս ողորմութեան ի պահպանութիւն կենաց աղքատաց տեղւոյս։

Արդարև շնորհունիմք մեծապէս բարերարաց Ազգիս, և զորոց անուանս ընդ առատապարգևորոցն՝ պատիւ համարիմք յիշատակել ի սմա ի ծանօթութիւն ամենեցուն։

Թուական			Պարսից Ռուփիք *)
Ի 1870 Փետ. 25.	ի Բուշեռ, ի յարգոյ Պ. Երեմեայ Սեդրակեան նուիրեալ առ աղքատս		250
,, ,,	ի Կալկաթա, ի Գեր. Աբգար և կօ'' էն վաշխ գումարաց 200 կօ'' ռուփիք որ է		450
,, Ապրիլ 19.	ի Բթաւիա, ի Գեր. Հոգաբարձուաց սուրբ Յովհ. Եկեղ. վաշխ գումարաց որ է 900 ռուփիք		1800
,, Օգոստ. 25,	ի Կալկաթա, ի Գեր. Աբգար և կօ'' էն աւանդեալն մայր գումար 2000 կօ'' ռուփոց որ է		4500
,, Նոյեմբեր 2.	ի Կալկաթա, ի Գեր. Պ. Թովմաս Մէլքումեան Եկեղեցպանէն Հայոց Նազարեթայ սուրբ Եկեղեցւոյ ի քանի ամաց հետէ մնացեալ վաշխ գումարաց		1364
,, ,, 9.	ի Բթաւիա, ի բարեպաշտ Հայ Հասարակութենէ հանգանակեալ գումար	600	
,, ,,	ի Սամարանգ, ևս ևս ևս	650	
,, ,,	ի Սուրաբայեայ ևս ևս ևս	200	
,, ,,	ևս ի Գեր. Հոգա. սուրբ Յովհ. Եկեղ. Բթաւիոյ վաշխ գումարաց	450	
	Ջաւու Ռուփիք	1900	3838
Ի 1871 Փետ. 20.	ի Կալկաթա, ի Գեր. Աբգար և կօ'' էն ևս վաշխ գումարաց 200 կօ'' ռուփիք որ է		414
,, ,,	ի Բուշեռ ի Հայ և յԱնգղիացի բարեպաշտաց հանգանակեալն		869
,, Մարտ 23.	ի Կալկաթա, ի բարեպաշտ Հայ հասարակութենէ հանգանակեալ գումար 750 կօ'' ռուփեաց, որ է		1600
,, ,, 28,	ի Ռաշտ, ի բարեպաշտ Աղայ Կարապետ Աւետովէն նուիրեալ		150
,, Մայիս 10.	ի Դաքա, ի բարեպաշտ Հայ հասարակութենէ հանգանակեալ գումար 521. կօ. ռուփեաց, նաև ի փոխմափայլ Խաչէ Աբգօլ Պ֊անի Գնիմէն (մահմետական) նուիրեալ զգումարն 1000 կօ. ռուփեաց, որք բովանդակին		3498-6
,, ,,	ի Հանգուն, ի բարեպաշտ Հայ հասարակութենէ հանգանակեալ գումարն 120 կօ. ռուփեաց		276
,, ,,	ի Կալկաթա, ի բարեպաշտ Հայ հասարակութենէ Գանձանական հանգանակեալն, զոր Գեր. Պ. Թովմաս Մէլքումեան Եկեղեցպանն առաքեալ էր զգումարն 125 կօ. ռուփեաց		287-10
,, ,,	ևս ի Գեր. Պրնց. Աբգար և կօ'' էն ամբողջ մնացորդ մայր գումարն 2000 կօ. ռուփեաց		4400

(*) 25 Պարսից Ռուփիք են մի Անգղիական լիրայ։

,, Օգոս. 3. ի Բեթաւիա, ի Գեր. Հոգաբարձուաց սուրբ Յովհ. Եկեղ. ընկալեալ զմայր գումարն տնանկաց 4500 Ֆլաւռ ռուփեաց, որ է 9000
,, ,, ի Բաքու քաղաքէն ի բարեպաշտ Հայ հասարակութենէն հանգանակեալն ի ձեռն Բարձրագոյն հաստատեալ Մարդասիրական Ընկերութեանն յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Հայոց, դեռ ստանալիք 2335

Պարսից Ռուփիք 35031·16

Նաեւ ի Թէհրան, ի բարձրագոյն Դեսպանատանէն Անգղիացւոց առաքեալ ձեռամբն Գեր. Պ. Ս. Պ. Աշանուրեան ի նպաստ աղքատաց տեղւոյս 7000

Յայտնեմք, զվեր յիշատակեալ գումարն ի ձեռն Հոգաբարձութեանս Երկեղն Աղքատաց Ջուղայ մասնատրեալ յաղքատս, և զպարզացուցակս բաժանողութեան յետ գտանելոյ մեր զանդորրութիւն ունիմք ի լոյս ընծայել ի գիտութիւն:

Եւ քանզի անտանելի թանգութեանս հետեւանք՝ ի պատճառս երկամեայ երաշտութեան երկրիս, յապայս զայրագին եղանակաւ սկիզբն առնէ երկանց՝ չար քան զառաջինն, և որք մինչ ցայսօր մարթացան վերյիշեալ տրոց օժանդակութեամբն պահպանիլ, ընդ նմին և զամենայն կահ և զկարասիս տան և զստացուածս ի վաճառ հանելով՝ զներագին՝ յապրուստ կեսակենդան կենաց իւրեանց, հազիւ հազ անձնապահ եղեն ի մահառիթ նեղութենէս: Իսկ արդ՝ զի՞նչ զհետ գայ առնել, Տէր ողորմեսցի, զի այլ ոչ ունին գոյս և ինչս և ոչ զարդիւնս աշխատանաց, և յամենայն կողմանց պարաւանդեալ յանհնարին տառապելութեան, աղքատք՝ ի հոգիս ապաստան եղեն, և ընչաւէտքն յերեսաց անյագ թանգութեանս օր ըստ օրէ տնանկացեալ, ոյր վասն առաւելան անդր քան զմի հազար հոգիս թիւք աղքատաց տեղւոյս, ո՜հ աղէտից, որոց թարշամեալ և թառամեալ տիպք կերպարանացն արդարև տան շարժել զամենայն սիրտ ի գութ ողորմածութեան: Ուստի թախանձագին աղերսանօք զամենակարեւոր խնդիր մեր այսու աղետապատում թղթովս ապաստան առնեմք ի շնորհս համակրութեան և մարդասիրութեան ամենայն Քրիստոնէից եղբարց մերոց, զի ի փառս Աստուծոյ և ի սէր քրիստոնէութեան բարեյօժարեսցեն զձեռն ողորմածութեան կարկառել ի պէտս կենաց փրկութեան՝ հազարաւոր Հայ աղքատաց Ջուղայ, ընդ որս և մեք երախտապարտութեամբ բազմաւ ունիմք ի տրիտուր հայցել յԱստուծոյ զտուրս բարեաց պարգեւել բարերարաց Ազգիս մերոյ:

Հոգաբարձութիւն Երկեղն Աղքատաց Ջուղայ

Տէր Յարութիւն Տէր Ս.
Տէր Յարութիւնեանց:
Տէր Սեղբեստրոս Յովհաննէսեան:
Տէր Կիրեղ Թ. Յովհաննեանց:

ԿՆԻՔ
ԱՐԿՂԻՆ
ԱՂՔԱՏԱՑ:

Ի Նոր Ջուղա:

Ի 1874 ամի յ5-ն Օգոստոսի: